# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2026թ. /ապրիլ 17, Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայր/

## օրակարգ՝

«Վահագնաձոր» փիէկի կառուցում

2026թ. ապրիլի 17-ին, Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացավ «ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Վահագնաձոր» փիէկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Շ. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին նաև համայնքապետարանի աշխատակիցները, բնակիչներ, ընկերության ներկայացուցիչները:

Շ.Կարապետյանի կողմից ներկայացվեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները:

Ընկերությանը ներկայացվեցին հարցադրումներ՝ կապված մոտակա բնակելի տարածքների, գետի բնական թողքի ապահովման չափաքանակների, ինչպես նաև սոցիալական ուղղությամբ բնակավայրին տրամադրվող աջակցության վերաբերյալ: Ընկերությունը պատասխանեց, որ մոտակա բնակելի տարածքների վրա ազդեցությունները գնահատված են և նախատեսվում են համապատասխան մեղմման միջոցառումներ աղմուկի և թրթռման մակարդակները նվազագույնի հասցնելու համար: Գետի բնական թողքի ապահովման մասով նշվեց, որ կպահպանվեն ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նորմատիվ պահանջները և կիրականացվի առցանց ջրաչափական տվյալների փոխանցում լիազոր մարմնին: Սոցիալական ծրագրերի շրջանակում ընկերությունը պատրաստակամություն

հայտնեց համայնքի հետ հուշագրով սահմանել աջակցության ուղղությունները՝ թիրախային աջակցություն տրամադրելով Վահագնաձոր բնակավայրին:

Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում: Մասնակիցները կողմ արտահայտվեցին նախատեսվող գործունեությանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շ.Կարապետյան

«ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ